

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 165

Վերակազմ աստուածաբաններ բաժանում են փրկարար հաւատքը տարբեր առումներով: Յաճախադէպ ճշմարիտ հաւատքը սահմանել է որպէս ունենալով երեք հիմնական տարրեր՝ գիտութիւն, ընդունելութիւն, եւ վստահութիւն:

**Իսկական հաւատքը ներառում է գիտութիւն** – Փրկարար հաւատքը ներառում է ուղիղ գիտութիւն աւետիսի հիմնական ճշմարտութիւնների մասին՝ այսինքն ճշգրիտ հասկացողութիւն Քրիստոսի անձի եւ Նրա գործի առթիւ՝ Նրա կեանքը, մահը եւ յարութիւնը մեղաւորների փրկութեան համար: Բացի փրկութեան բարի լուրը, պարզ է որ մեղաւորը պիտի նախ իմանայ Աստուծոյ սրբութեան, Աստուծոյ կատարեալ պահանջի, մարդու մեղաւորութեան, մեղքի պատժի, Աստուծոյ առջեւ եղած բոլոր մարդկութեան անյուսալի եւ թշուառ վիճակի, եւ ուստի նրա փրկութեան պէտքի մասին: Եթէ մէկը չի հասկանում այս վարդապետութիւնները, ապա ինչքան էլ որ նա անկեղծ լինի իր ասածի եւ հաւատքի նկատմամբ, նա չի փրկւի: Թէպէտ աւետիսի հիմնական վարդապետութիւնների ուղիղ ըմբռնումը անհրաժեշտ է փրկութեան համար, սակայն նոյնիսկ այդ բաւարար չէ փրկութեան համար (Յովհաննէս 6:66, 11:45-46): Աւելին պէտք է:

**Իսկական հաւատքը ներառում է ընդունելութիւն** – Մէկը ոչ միայն պէտք ունի իմանայ Քրիստոսի անձի ու Նրա գործի առթիւ, նա նաեւ պէտք ունի հաստատել կամ համաձայն լինել թէ այս բաները ճշմարիտ են: Երբ ասում ենք թէ մենք հաւատում ենք Յիսուսին, մենք իրականութեան մէջ ասում ենք թէ համաձայն ենք որ Յիսուսի առթիւ եղած այս կէտերը ճշմարիտ են: Մէկը չի կարող ասի որ նա հաւատում է Յիսուսին, բայց ապա մերժի Նրա աստուծութիւնը կամ Նրա մարդկութիւնը, մերժի որ Նա մեղաւոր մարդու միակ Փրկիչն է, հեքի որ Յիսուսը իրապէս մեռաւ խաչի վրայ մեր մեղքերի համար, թէ Նա թաղւեցաւ եւ ապա մարմնաւորապէս յարութիւն առաւ գերեզմանից, եւ թէ մեր փրկութիւնը հիմնւած է միմիայն ու բոլորովին Քրիստոսի գործի վրայ: Ուրեմն բացի աւետիսի ճշգրիտ ըմբռնումը, անձի այս կէտերի հաստատումը նաեւ անհրաժեշտ է փրկութեան համար: Սակայն նոյնիսկ այս բաները բաւարար չեն փրկութեան համար (Յակոբոս 2:19): Աւելին պէտք է:

**Իսկական հաւատքը ներառում է վստահութիւն** – Մէկը ոչ միայն պէտք ունի իմանայ Քրիստոսի անձի ու Նրա գործի առթիւ, եւ հաստատի որ այս բաները ճշմարիտ են, նա նաեւ պէտք ունի անձամբ վստահի կամ հենի Յիսուս Քրիստոսին իր փրկութեան համար: Փրկարար հաւատք ունենալը նշանակում է իմանալ, ընդունել, եւ սիրել աւետիսը, նշանակում է ընդգրկել մեր կամքովն ու սրտովը այդ ինչ որ ընդունել ենք մեր մտքովը, եւ ուստի ապրել դրան համաձայն:

Թէպէտ մենք Աստուծոց պատուիրած ենք որ աւետիսը մարդկանց աւետարանել եւ հռչակել, հարկ է մեզի գիտակցել որ թէկուզ մենք կարող ենք ողջամիտ փաստարկներով եւ ապացոյցներով համոզել մարդկանց որպէսզի ընդունել Քրիստոնէական հաւատքի վաւերականութիւնը, առաջնորդելով նրանց հասկանալու եւ ընդունելու աւետիսի հիմնական ճշմարտութիւնները՝ որը մտքումն են հաստատում, սակայն միայն Սուրբ Հոգին է կարող յառաջացնել մարդկանց վստահելու Քրիստոսին՝ որը մի գործ է որ Նա կատարում է մեղաւորների սրտերումը, բերելով նրանց դէպի փրկութիւն: Իսկական հաւատքը Աստուծոյ պարգէն է:

16րդ դարայ Վերակազմողները անհրաժեշտ զգացին ճշգրիտօրէն սահմանելու փրկարար հաւատքը: Չան Կալվինը փրկարար հաւատքը սահմանեց որպէսզի՝ «Մեր հանդէպ եղած Աստուծոյ բարիքի մի ամուր եւ վստահ գիտութիւն, հաստատուած Քրիստոսի մէջ գտնուած ազատ խոստման ճշմարտութեան վրայ, եւ յայտնուած մեր մտքերին, եւ կնքուած մեր սրտերի վրայ, Սուրբ Հոգու միջոցով»: Մարտին Լութերը փրկարար հաւատքը բացատրեց որպէս մի կենդանի հաւատք, որը միշտ արտադրում է բարի գործերի պտուղը (Յակոբոս 2:14-26):

Եբրայեցիս 11:1-ում կարդում ենք թէ՝ «Հաւատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ եւ չերեւցող բաների ապացոյցն է»: Այս հաւատքի մի հակիրճ սակայն գեղեցիկ սահմանումն է, կամ աւելի ուղիղ այս ցոյց է տալիս իսկական հաւատքի արդիւնքը: Այս համարում գտնուած յոյս բառը չի նշանակում ցանկացած երեւակայութիւն կամ փափաքել մի բան ապագայում որը գուցէ տեղի ունենայ կամ էլ չունենայ. իսկ մէկը որ ունի փրկարար հաւատք ունի լրիւ վստահութիւն կամ յոյս բոլոր բաների մասին որ Աստուած խոստացել է Իր Խօսքումը՝ թէ այս կեանքի համար եւ թէ նոյնիսկ այդ բաների համար որ մենք չենք կարող տեսնել եւ դեռ ապագայ են, որովհետեւ նա վստահում է Աստուծոյ նկարագրին, վստահելիութեան եւ հեղինակութեան՝ որը ցոյց է տուել Իրեն որպէսզի ճշմարիտ եւ վստահելի, կատարելով Իր բոլոր խոստումները պատմութեան ընթացքում (Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը, Գլուխ 14, Բաժին 2):

Ուստի եզրափակում ենք դարձեալ նշելով թէ փրկարար հաւատքը բաղկացած է աւետիսի հիմնական ճշմարտութիւնների ուղիղ հասկացողութիւնից, այս ճշմարտութիւնների մտաւոր ընդունելութիւնից, եւ Յիսուս Քրիստոսի անձնական վստահութիւնից: Երեքն էլ անհրաժեշտ են փրկութեան համար: